

ՍԱ ՊԱՏՐԻԱՐԳԻ ԼԵԱԼ ԱՐԺԱՆԻ,
 ՀԱՅԿԱԶՈՒՆԵԱՅՆ՝ Ի ԲԻՒԶԱՆԴԻ.
 ԱՊԱ ԿԱՄՕՔ՝ ԻՐ ԸՐԱԺԱՐԻ,
 Ի ԼՐՈՒՄՆ ԱՄԱՑ՝ԸՆ ՏԸՍՆԵԿԻ:

ԳԻՄԵԱՑ Ի ՀՈՌՈՎՄ՝ ՄԱՅՐԸՆ ԲԱՐԻ,
 ԸՍՏ ՆԱԽՆՈՅՆ ԻՐ՝ ՕՐԻՆԱԿԻ:
 ԱՌ Ի ՆՄԱՆԷ՝ ՊԱՏՈՒԱՍԻՐԻ,
 ՈՐԴԻԱՊԷՍ՝ ԸՍՏ ԱՐԺԱՆԻ:

ԳԱՅ ՊԱՆԴԻՏԻ՝ ՅԱՅՍՄ ՔԱՂԱՔԻ,
 ԽԱՂԱՂԱԿԱՆ՝ ԿԵՆՕՔ ՓԱՅԼԻ.
 ՄԻՆՁԵՒ ԿՈՉՄԱՄԲ՝ ԸՆ ՏԷՐՈՒՆԻ,
 ՓՈՒՒ ԅԱՆԱՆՑ՝ ԻՐ ՀԱՅՐԵՆԻ:

Բարերախտաբար թրիեստի հայ կաթողիկեայ վախճանեցոց մատեանը կայ այսօր, զոր թրիեստի Մխիթարեանք իրենց հաստատութենէն ի վեր, այն է 1773—1810, կանոնաւորապէս բռնած են, ինչպէս նաեւ Մկրտեցոց եւ Պսակեցոց գիրքը: Այս մատեանը կը պահուի թրիեստի S. Maria Maggiore եկեղեցին, ուր ես 1895ին ընդօրինակած եմ վիեննայի վանքին մատենագարանին համար (Տաշեան, Յուլիան, Թ. 454). Ասոր մէջ ահա կը կարդանք այսպէս (Թղթհ: 39ա).

“Ազ. Յամի Տեառն 1791 եւ յունիսի 22, վախճանեցաւ գերապատիւ գրիգոր վարդապետն Աստուածատուրեանց, որ էր պատրիարք ամենայն Հայոց Կոստանդնուպօլսի, իր 78ամեայ: Եւ Թաղեցաւ ի մասնաւոր գերեզմանի ի գերեզմա-